ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան 2026թ

ՀՀ քաղաքացի Արթուր Բաղդանյանը (Անձնագրի համար՝ AP0665554, այսուհետ սույն պայմանագրի տեքստում «Պատվիրատու», մի կողմից, և «ԲՈՒԹՔԱՄՓ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նարեկ Ալլիկյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ «Կատարող», մյուս կողմից, այսուհետ սույն պայմանագրի տեքստում միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Կատարողի մատուցված ծառայությունները և վճարել սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից ներկայացված ուսանողին (այսուհետ՝ Ուսանող) դասավանդել Cloud Engineer Profession դասընթացը, որը ներառում է նաև պրակտիկ ուսուցում և խորհրդատվություն (այսուհետ՝ Ծառայություններ):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

- **2.1.1.** Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով:
- **2.1.2.** Ապահովել դասընթացների անխափան անցկացման համար անհրաժեշտ հարմարությունները:
- **2.1.3.** Ծառայությունների մատուցմանը խոչընդոտ հանդիսացող խնդիրների առկայության դեպքում հնարավորինս արագ վերացնել դրանք:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

- **2.2.1.** Կատարողից պահանջել Cloud Engineer Profession դասընթացները կազմակերպել պատշաճ որակով և համապատասխան որակավորում և գիտելիքներ ունեցող անձի / անձանց միջոցով:
- **2.2.2.** Իր նախաձեռնությամբ դադարեցնել ուսուցումը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

- **2.3.1.** Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին ու կարգին համապատասխան:
- **2.3.2.** Կատարողի կողմից սահմանված կարգի համաձայն մասնակցել Data Analyst Professions դասընթացներին և գնահատման օրերին:

- **2.3.3.** Խնամքով և նպատակային օգտագործել Կատարողի կողմից տրամադրվող գույքը:
- **2.3.4.** Կատարողի կողմից տրամադրվող գույքը Պատվիրատուի կողմից վնասելու դեպքում, անհապաղ վերանորոգել այն իր սեփական միջոցներով: Եթե գույքին պատճառվում է վնաս և այն վերանորոգման ենթակա չէ, ապա Պատվիրատուն պարտավոր է փոխհատուցել հասցված վնասը կամ գույքը փոխարինել նորով:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Հրաժարվել սույն պայմանագրի կատարումից եթե՝

- **2.4.1.1.** Խախտվում է պայմանագրի 3 կետով սահմանված կարգը 1-ից ավել անգամ:
- **2.4.1.2.** Պատվիրատուն չի կատարում կամ թերի է կատարում իրեն հանձնարարված տնային առաջադրանքները:
- **2.4.1.3.** Պատվիրատուի կողմից չի նկատվում առաջադիմություն դասընթացների ընթացքում, այն է՝ ընթացիկ գնահատման օրերի և քննությունների անբավարար արդյունքներ:
- **2.4.1.4.** Պատվիրատուն 1 ամսվա ընթացքում 1-ից ավել անգամ անհարգելի բացակայում է դասընթացներից:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Դասընթացի արժեքի մի մասը փոխհատուցում է IMAST բարեգործական հավելվածը 750 ամերիկյան դոլարին-ին համարժեք դրամի չափով, մյուս մասը՝ Տեխնոլոգիական Կրթություն Հիմնադրամը

3.3. Կատարողի նախաձեռնությամբ դասընթացները վաղաժամկետ դադարեցնելու պարագայում, ինչը հետևանք չէ Պատվիրատուի պարտականությունների չկատարման կամ թերի կատարման, անկախ Պայմանագրի 5.2 կետից, Ծառայությունները համարվում են մատուցված մասնակի մինչև դասընթացների դադարեցման օր:

3.4. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում դասընթացի արժեքը ետվերադարձի ենթակա չէ: Այն ներառում է վարչական, կազմակերպչական և ներգրավման ծախսեր, ինչպես նաև Պատվիրատուի տեղի ամրագրման վճար տվյալ դասընթացում:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում դասընթացի մեկնարկի օրից

5.2. Ծառայությունները համարվում են մատուցված դասընթացի ավարտի պահին

5.3. Կատարողը իրեն իրավունք է վերապահում փոփոխություններ և լրացումներ կատարել Պայմանագրում, որի վերաբերյալ կտեղեկացնի Պատվիրատուին:

5.4. Դասընթացների շրջանակներում ստեղծված պրոդուկտները պատկանում են բացառապես Կատարողին:

5.5. Դասընթացները անցկացվելու են հայերեն լեզվով:

5.6. Պայմանագրի 6-րդ բաժնում նշված Պատվիրատուին պատկանող էլեկտրոնային փոստի հասցեի միջև հեռահաղորդակցական կապը համարվում է պաշտոնական:

5.7. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.8. Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի տվյալները

«Պատվիրատու»	«ԲՈՒԹՔԱՄՓ» ՍՊԸ
Ուսանողի անուն, ազգանուն: Արթուր Բաղդանյան	**Իրավ. հասցե՝** ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 2թ. 47, բն. 2
Անձնագրի համար: AP0665554	**Գործ. հասցե՝** ք. Երևան, Հ. Հակոբյան 3
ՈՒՄ կոդից: 012	**ՀՎՀՀ:** 00238961
ՀԾՀ: 1610000285	**Հ/Հ:** 1570073681500300
Բնակության հասցե: ք. Երևան, Շիրազ 4.	**Բանկ:** «Ամերիա Բանկ» ՓԲԸ
Էլ. հասցե: azturbaghdanyan20@gmail.com	**Տնօրեն:** Նարեկ Ասլանյան
Date: 05, 08, 2026	
Signature:	**Կ.Տ. / Signature:**

«БУТКАМП» "BOOTCAMP" 00238961